*Լրամշակված նախագիծ*
*Երկրորդ ընթերցում*

*Կ-032-17.09.2021, 22.10.2021-ՏՀ-011*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

# «ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

***Հոդված 1.*** «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» 2001 թվականի մայիսի 2-ի ՀՕ-179 օրենքի (այսուհետ՝ Օրենք) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԵՈԴԵԶԻԱՅԻ, ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ»:

***Հոդված 2.*** Օրենքի նախաբանից հանել «Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և քարտեզագրական գործունեության հետ կապված հարաբերությունները:» նախադասությունը:

***Հոդված 3.*** Օրենքի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«*Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան և նպատակը*

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական, քարտեզագրական և տարածական տվյալների ենթակառուցվածքի գործունեության հետ կապված հարաբերությունները: Հայաստանի Հանրապետությունում բոլոր քարտեզագրական և գեոդեզիական աշխատանքները, ներառյալ տարածական տվյալների հավաքագրումը, մշակումը, պահպանումը, տարածումը և տրամադրումը իրականացվում են սույն օրենքի համապատասխան:

2. Սույն օրենքի նպատակն է կարգավորել գեոդեզիական և քարտեզագրական գործունեության աշխատանքները, սահմանել Հայաստանի Հանրապետության կառավարության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, գեոդեզիայի, քարտեզագրության և տարածական տվյալների ենթակառուցվածքի բնագավառներում, հաստատել գեոդեզիական և քարտեզագրական գործունեության հետ կապված վեճերի լուծման և սույն օրենքը խախտելու համար պատասխանատվությունները, սահմանել գեոդեզիայի, քարտեզարության և տարածական տվյալների ենթակառուցվածքի բնագավառներում միջազգային համագործակցության կարգը:»:

*Հոդված 4.* Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին հոդվածով.

*«Հոդված 1.1. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները*

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) գեոդեզիա՝ երկրագնդի ծանրաչափական դաշտի, Երկրի մակերևույթի և տարածական օբյեկտների կոորդինատների ու բարձունքային նիշերի, ինչպես նաև ժամանակի ընթացքում նշված կոորդինատների և բարձունքային նիշերի փոփոխությունները որոշելու գիտական, տեխնիկական, արդյունաբերական և այլ գործունեությունների ընթացքում ծագող հարաբերությունների ոլորտ.

2) գեոդեզիական և քարտեզագրական գործունեություն՝ գեոդեզիայի, քարտեզագրության և տարածական տվյալների ենթակառուցվածքի ոլորտում գիտատեխնիկական, ծառայությունների մատուցման, տեղեկատվական համակարգերի օգտագործման և կառավարչական գործունեություն.

3) գեոդեզիական հիմնակետ՝ ինժեներական կառույց, որը տեղանքում ամրացված է երկրագնդի ֆիզիկական մակերևույթին որոշված կոորդինատներով և բացարձակ բարձրությունով.

4) գեոդեզիական ցանց՝ տեղանքում ամրացված գեոդեզիական հիմնակետերի ամբողջություն, որոնց տեղադիրքը որոշված է նրանց համար ընդհանուր հանդիսացող գեոդեզիական կոորդինատային համակարգում:

5) գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքներ՝ գեոդեզիական, քարտեզագրական նյութերի ու տարածական տվյալների ստեղծման, օգտագործման և ծառայությունների մատուցման գործընթաց.

6) Երկրի հեռազննում՝ տիեզերքից կատարված նկարահանումների միջոցով Երկրի մակերևույթի վերաբերյալ տվյալների ստացման գործընթաց.

7) կոորդինատային համակարգ՝ թվային մեծություններ, որոնց միջոցով հարթության, մակերևույթի վրա կամ տարածության մեջ որոշվում է կետի տեղադիրքը:

8) մասշտաբ՝ համամասնություն, որը սահմանում (հաստատում) է հարաբերակցությունը քարտեզագրական պատկերում արտահայտված օբյեկտի գծային չափերի և բնության մեջ նրա իրական չափերի միջև.

9) մասշտաբային շարք՝ Հայաստանի Հանրապետության համար ընդունված պետական մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների և հատակագծերի որոշակի մասշտաբների հստակ համակարգ.

10) տեղական կոորդինատային համակարգ՝ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորը չգերազանցող սահմանափակ տարածքի համար սահմանված պայմանական կոորդինատային համակարգ, որի կոորդինատների սկիզբը և կոորդինատային առանցքների կողմնորոշումը շեղված են պետական միասնական կոորդինատային համակարգի նկատմամբ, որը կիրառվում է գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացման ժամանակ.

11) տարածական տվյալներ՝ տարածական օբյեկտների վերաբերյալ տվյալներ, որոնք ներառում են տեղեկություններ դրանց ձևի, տեղադիրքի և հատկությունների մասին, և սահմանված տարածա-ժամանակային կոորդինատային համակարգում ունեն որոշակի տեղադիրք.

12) տարածական օբյեկտ՝ իրական աշխարհի առարկա կամ երևույթ, որը բնութագրվում է Երկրի վրա որոշակի տեղադիրքով.

13) բազային տարածական տվյալներ՝ համընդհանուր հասանելի, գաղտնիություն չպարունակող, ժամանակի մեջ կայուն տարածական դիրքով առանձնացվող և այլ տարածական օբյեկտների համար կողմնորոշման հիմք հանդիսացող, առավել օգտագործվող տարածական օբյեկտների թվային տվյալներ:

14) թեմատիկ տարածական տվյալներ՝ իրավահարաբերությունների սուբյեկտների կողմից իրենց մասնագիտական գործունեության շրջանակներում ստեղծված տարածական տվյալներ (տնտեսական, գիտական, կրթական և այլ).

15) տարածական տվյալների բանկ՝ բազային և (կամ) այլ տարածական և ատրիբուտային տվյալների համախումբ, որն անհրաժեշտ է տարածքների և օբյեկտների վիճակի, երևույթների և գործընթացների մոնիթորինգի, ինչպես նաև հանրապետական և տեղական մակարդակներում սոցիալական և տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման, կառավարման, տեղեկատվական, իրավական և այլ խնդիրների լուծման համար.

16) մետատվյալներ՝ տարածական տվյալներ և ծառայություններ նկարագրող տեղեկատվություն, որն ապահովում է դրանց ցուցակագրումը, որոնումը, տվյալների ճիշտ գնահատումն ու օգտագործումը տարբեր նպատակների համար.

17) քարտեզագրություն՝ տարածական տվյալների, այդ թվում՝ տեղեկատվական համակարգերի օգտագործման, ուսումնասիրության, ստեղծման, օգտագործման, վերափոխման և ցուցադրման համար գիտական, տեխնիկական, արդյունաբերական և այլ գործունեությունների ընթացում բխող հարաբերությունների ոլորտ.

18) քարտեզագրագեոդեզիական ֆոնդ՝ քարտեզագրական և գեոդեզիական գործունեության իրականացումից ստեղծված և հետագա օգտագործման նպատակներով երկարատև պահպանման ենթակա նյութերի ու տվյալների հավաքածու.

19) աշխարհագրական տեղեկատվական համակարգ՝ սարքածրագրային տեղեկատվական համակարգ, որը նախատեսված է տարածական տվյալների հավաքագրման, պահպանման, մշակման, վերլուծության, մոդելավորման, կառավարման և տարածման համար.

20) տարածական տվյալների ենթակառուցվածք՝ հանդիսանում է տեխնոլոգիաների, նպատակային ծրագրերի, չափորոշիչների (ստանդարտների), մարդկային ռեսուրսների և դրանց առնչվող գործունեությունների համախումբ, որոնք անհրաժեշտ են տարածական տվյալների, մետատվյալների ձեռք բերման, մշակման, տարածման, օգտագործման, պահպանման և ծառայությունների մատակարարման համար:

21) ազգային տարածական տվյալների ենթակառուցվածք՝ ազգային տարածական տվյալների ձեռքբերման, մշակման, պահպանման, տարածման, օգտագործման համար անհրաժեշտ տեխնոլոգիաների, քաղաքականության, նկարագրված և իրականացված նորմերի և կանոնների հավաքածուների, աշխարհագրական տեղեկատվական պլատֆորմի, ստանդարտների, մետատվյալների և դրանց մշակման ծառայությունների, չափանիշների, մարդկային ռեսուրսների և հարակից գործողությունների տվյալների հասանելիության, փոխանակման և օգտագործման համաձայնության, համակարգման և մոնիտորինգի մեխանիզմների ամբողջություն.

22) ազգային գեոպորտալ՝ համացանցային, սարքածրագրային համալիր՝ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի հիմնական տարր, որն ապահովում է տարածական տվյալների հասանելիությունը վեբ-տեխնոլոգիաների միջոցով:»:

*Հոդված 5.* Օրենքի 2-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում՝

ա. «գ» կետում «(պլանային և բարձունքային)» բառերը փոխարինել «(պլանային, բարձունքային և իրական ժամանակում մշտապես գործող)» բառերով.

բ. «զ» կետում «սահմանագծման» բառից հետո լրացնել «(դելիմիտացիա),» բառը, իսկ «սահմանազատման» բառից հետո լրացնել «(դեմարկացիա)» բառը.

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ժդ» կետով՝

«ժդ) իրական ժամանակում մշտապես գործող ռեֆերենց կայանների զարգացումը, շահագործումը և տվյալների մատակարարումը:».

2) 3-րդ մասում «ա» կետում «կադաստրի, հողերի ծրաչափություն» բառերը փոխարինել «կադաստրային» բառով.

3) 4-րդ մասում՝

ա. «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) տեղագրական և կադաստրային քարտեզների, հատակագծերի պետական մասշտաբային շարքի սահմանումը.».

բ. «բ» կետում «տեղագրական,» բառից հետո լրացնել «կադաստրային,» բառը.

գ. «գ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) Երկրի հեռազննման արդյունքում ստացված նյութերի մշակումը, վերծանումը, օդատիեզերական լուսանկարների ֆոտոգրամետրիկ մշակումը քարտեզների ստացման նպատակով.».

դ. «է» կետում «(այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային ատլասի, Աշխարհի մեծ ատլասի, կրթական համակարգի համար ուսումնական և այլ պաշտոնական քարտեզների)» բառերը փոխարինել «(այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային ատլասի, Աշխարհի մեծ ատլասի, կրթական համակարգի համար ուսումնական և պաշտոնական, թեմատիկ քարտեզների ու ատլասների, տուրիստական ատլասների)» բառերով.

ե. «թ» կետում «երկրատեղեկատվական» բառը փոխարինել «աշխարհագրական տեղեկատվական» բառերով.

զ. «ժ» կետում «քարտեզների ու հատակագծերի» բառերը փոխարինել «քարտեզների, հատակագծերի, տարածական տվյալների» բառերով.

է. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ժդ», «ժե», «ժզ», «ժէ», «ժը» կետերով՝

«ժդ) ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծում, վարում և փոխգործելիության ապահովում.

ժե) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին և հասարակությանն անհրաժեշտ տարածական տեղեկատվության ստեղծում, դրա հասանելիության, մատչելիության, անընդհատության ապահովում.

ժզ) տարածական տվյալների և ծառայությունների հասանելիության ապահովում ազգային գեոպորտալի միջոցով.

ժէ) քարտեզագրության ոլորտում տարածական տվյալների փոխանակման և կառավարման նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի նախապատրաստում.

ժը) տարածական տվյալների, ծառայությունների օգտագործման և փոխանակման քաղաքականության մշակում:».

4) 5-րդ մասում՝

ա. «ա» կետում «ճյուղային» բառից հետո լրացնել «(ոլորտային)» բառը.

բ. «բ» կետում «երկրատեղեկատվական» բառը փոխարինել «աշխարհագրական տեղեկատվական» բառերով, իսկ «համակարգերի» բառից հետո լրացնել «(տարածական տվյալների ենթակառուցվածք)» բառերը:

*Հոդված 6.* Օրենքի 3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. «նյութերի և» բառերից հետո լրացնել «տարածական» բառը.

բ. լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության սուբյեկտները ենթակա են հաշվառման կոմիտեի կողմից սահմանված կարգով:»:

*Հոդված 7.* Օրենքի 2-րդ Գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՈԴԵԶԻԱՅԻ, ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ».

Հոդված 8. Օրենքի 4-րդ հոդվածում՝

1) վերնագրում և «ա» կետում «գեոդեզիայի և քարտեզագրության» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «գեոդեզիայի, քարտեզագրության, տարածական տվյալների ենթակառուցվածքի» բառերով.

2) «բ» կետում «գեոդեզիական և քարտեզագրական» բառերը փոխարինել «գեոդեզիական, քարտեզագրական, տարածական տվյալների ենթակառուցվածքին վերաբերող» բառերով.

3) «դ» և «զ» կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) հաստատում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ տարածական տվյալների ցանկը և դրանց ստանդարտացման ուղեցույցները.

զ) սահմանում է տարածական տվյալների ենթակառուցվածքի վարման և վերջինիս միջոցով տեղեկատվության տրամադրման կարգը.».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «է» կետով.

«է) սահմանում է պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի ստեղծման, պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգը:»:

*Հոդված 9.* Օրենքի 5-րդ հոդվածում`

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«*Հոդված 5. Գեոդեզիայի, քարտեզագրության և տարածական տվյալների ենթակառուցվածքի բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի իրավասությունը».*

2) «Գեոդեզիայի և քարտեզագրության» բառերից առաջ լրացնել «1.» թիվը.

3) «ա» կետում «գեոդեզիայի և քարտեզագրության» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «գեոդեզիայի, քարտեզագրության և տարածական տվյալների ենթակառուցվածքի» բառերով.

4) «բ» կետում «բնագավառի» բառից հետո լրացնել «և տարածական տվյալների ենթակառուցվածքի վերաբերյալ» բառերը.

5) «գ» կետում «աշխատանքների» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքին վերաբերող» բառերը.

6) «ե» կետում «քարտեզագրական» բառից հետո լրացնել «, տարածական» բառը.

7) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ մասով.

«2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները իրենց վերապահված գործառույթների իրականացման գործընթացում նախատեսվող թվային երկրատարածական տվյալների ստեղծման աշխատանքներ պլանավորելիս համապատասխան նախագծերը, ինչպես նաև տվյալ աշխատանքների արդյունքում ստեղծված երկրատարածական տվյալները` մինչև դրանք ընդունելը, ներկայացնում են լիազոր մարմին` կարծիքի:»:

*Հոդված 10.* Օրենքի 6-րդ հոդվածում`

1) «ա», «բ», «գ» կետերում «ճյուղային» բառից հետո լրացնել «(ոլորտային)» բառը.

2) «ե» կետում «քարտեզագրական» բառից հետո լրացնել «, տարածական» բառը.

3) «զ» կետում «նյութեր» բառից հետո լրացնել «ու տարածական տվյալներ Հայաստանի Հարապետության կառավարության կողմից հաստատված ստանդարտներով:» բառերը:

*Հոդված 11.* Օրենքի 7-րդ հոդվածում «ե» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե) Հայաստանի Հարապետության կառավարության կողմից հաստատված ստանդարտների համաձայն կոմիտեին տրամադրում է գեոդեզիական և քարտեզագրական բնույթի նյութեր ու տարածական տվյալներ:»:

*Հոդված 12.* Օրենքի 3-րդ Գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 3.
ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ, ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ»:

*Հոդված 13*. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) վերնագրում «քարտեզագրական» բառից հետո լրացնել «, տարածական տվյալների ենթակառուցվածքի» բառերը.

2) 3-րդ մասի «ա» կետում «քարտեզագրական» բառից հետո լրացնել «, տարածական տվյալների ենթակառուցվածքի» բառերը.

3) 3-րդ մասի «բ» կետում «աշխատանքների» բառից հետո լրացնել «, տարածական տվյալների ենթակառուցվածքի» բառերը:

*Հոդված 14.* Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. «այդ գործիքների ու սարքերի սերտիֆիկացումը,» բառերը հանել.

բ. «սերտիֆիկացման և ստանդարտացման պետական կոմիտեի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման բնագավառում կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի» բառերով.

2) 2-րդ մասում «և սերտիֆիկացման» բառերը հանել:

*Հոդված 15.* Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունում «նյութերն ու» բառերից հետո լրացնել «տարածական» բառը, իսկ նույն մասի երկրորդ պարբերությունում «նյութերի» բառից հետո լրացնել «և տարածական տվյալների» բառերը:

*Հոդված 16.* Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «նյութերը ու» բառերը փոխարինել «նյութերն ու տարածական» բառերով, իսկ «այլ նյութերը ու» բառերը փոխարինել «այլ նյութերն ու տարածական» բառերով.

2) 2-րդ մասում «նյութերը ու» բառերը փոխարինել «նյութերն ու տարածական» բառերով.

3) 3-րդ մասում «նյութերից և» բառերից հետո լրացնել «տարածական» բառը.

4) 6-րդ և 7-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

*Հոդված 17.* Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «գեոդեզիայի և քարտեզագրության» բառերը փոխարինել «գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների» բառերով.

2) 3-րդ մասի «դ)» կետից հանել «պետական կազմակերպություններին,» բառերը:

*Հոդված 18.* Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «նյութերից ու» բառերից հետո լրացնել «տարածական» բառը:

*Հոդված 19.* Օրենքի 16-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

*«Հոդված 16. Պետական գեոդեզիական և մշտապես գործող ռեֆերենց կայանների ցանցերի կետերի պահպանությունը».*

2) 1-ին մասում «(պլանային և բարձունքային)» բառերը փոխարինել «(պլանային, բարձունքային և իրական ժամանակում մշտապես գործող)» բառերով.

3) 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերում «Գեոդեզիական» բառից հետո լրացնել «և իրական ժամանակում մշտապես գործող» բառերը:

*Հոդված 20.* Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.1-ին, 16.2-16.5-րդ հոդվածներով.

*«Հոդված 16.1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի վարման սկզբունքները*

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծման և զարգացման գործընթացների փոխկապակցվածությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, շրջակա միջավայրի պաշտպանության, անվտանգության, պետական կառավարման առաջնահերթ խնդիրների լուծման, երկրի պաշտպանունակության և ազգային անվտանգության ապահովման հետ:

2. Տարածական տվյալների արդիականություն, լրիվություն, լիարժեք նկարագրություն, հուսալիություն, ամբողջականություն և հաստատված ճշգրտություն:

3. Տարածական տվյալների համատեղելիություն, որը հիմնված է միասնական բազային տարածական տվյալների բանկի օգտագործման, միասնական

կոորդինատային համակարգի, միասնական տեխնիկական նորմերի և ստանդարտների հիման վրա:

4. Տեխնիկական կանոնակարգերի, ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային ստանդարտների ներդաշնակեցում և համապատասխանեցում միջազգային ստանդարտներին:

5. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի, որպես բարդ կազմակերպչական և տեխնիկական համակարգի ստեղծման և զարգացման փուլայնությունը, որոնք բնութագրվում են կայունությամբ, զարգացման և շարունակական բարելավման անսահմանափակ տևողությամբ՝ ինտեգրված և համալիր մոտեցումների հիման վրա:

6. Ազգային տարածական տվյալների քաղաքականությունը իրականացվում է պարզության, թափանցիկության և արդարության միևնույն ժամանակ անվտանգության սկզբունքների հիման վրա:

*Հոդված 16.2. Տարածական տվյալների տրամադրումը*

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում առանձնացվում են բազային և թեմատիկ տարածական տվյալների շերտեր: Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ շերտերի տարածական տվյալների ցանկը սահմանվում է լիազոր մարմնի կողմից:

2. Բազային տարածական տվյալների շերտերը համարվում են պետական սեփականություն՝ անկախ ֆինանսավորման աղբյուրներից և դրանց ստեղծումից (թարմացումից), և մասնավորեցման ենթակա չեն: Բազային տարածական տվյալների այն մասը, որը ենթակա է հրապարակման չպետք է պարունակի պետական գաղտնիք պարունակող տեղեկատվություն, ինչպես նաև այլ տեղեկություններ, որոնց հասանելիությունը օրենքով սահմանված կարգով սահմանափակված է:

3. Թեմատիկ տարածական տվյալների կառուցվածքը, դրանց թարմացման և տրամադրման կարգը սահմանվում են ոլորտային լիազոր մարմինների կողմից ընդունված իրավական ակտերով:

4. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում տարածական տվյալները ստեղծվում, պահպանվում և տրամադրվում են մեկ միասնական կոորդինատային համակարգում:

*Հոդված 16.3. Մետատվյալների ստեղծումը և բովանդակությունը*

1. Մետատվյալները հրապարակվում են մետատվյալների շտեմարանում (կատալոգում), որոնց միջոցով շահառուները կարող են փնտրել և օգտվել տվյալների բազաներից կամ ծառայություններից:

2. Տարածական տվյալներ տրամադրող պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ստեղծում են իրենց մետատվյալները և ապահովում դրանց արդիականությունը:

3. Մետատվյալների ստեղծման և թարմացման կանոնները սահմանում է լիազոր մարմինը:

*Հոդված 16.4. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի փոխգործելիությունը, ոլորտային կադաստրների ինտեգրումը և տարածական տվյալների օգտագործման և փոխանակման քաղաքականությունը*

1. Կիրառման կանոնները, որոնք սահմանում են տարածական տվյալների հավաքածուների և ծառայությունների փոխգործելիության ապահովման տեխնիկական մեթոդները՝ հաշվի առնելով առկա տեխնոլոգիական հարթակների և էլեկտրոնային ծառայությունների կրկնակի օգտագործման առաջնահերթության կարգը, ինչպես նաև կատարման ժամկետները սահմանում է լիազոր մարմինը:

2. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի լիազոր մարմինը ոլորտային կադաստրների ինտեգրման նպատակով ազգային գեոպորտալի միջոցով ապահովում է բազային քարտեզագրական շերտերի հասանելիությունը:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ապահովում են իրենց ենթակայության տակ գտնվող տարածական տվյալների հասանելիություն ազգային գեոպորտալի միջոցով Կառավարության սահմանած կարգով:

4. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի տարածական տվյալների փոխանակման, հասանելիության և օգտագործման կարգը հաստատում է լիազոր մարմինը:

*Հոդված 16.5. Հայաստանի Հանրապետության կառավարության, Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի լիազոր մարմնի և սուբյեկտների իրավասություններն ու պարտականությունները*

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունն ապահովում է.

1) ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ոլորտին վերաբերող պետական քաղաքականության բարելավում,

2) տարածական տվյալների ազգային ենթակառուցվածքին վերաբերող նորմերի պահպանման նկատմամբ պետական վերահսկողության և հսկողության կազմակերպում,

3) տարածական տվյալների ազգային ենթակառուցվածքի գեոպորտալի ստեղծում և շահագործում,

4) տարածական տվյալների ազգային ենթակառուցվածքի ոլորտում սուբյեկտների իրավասությունների որոշում և հաստատում:

2. Ազգային տարածական տվյալների օգտագործման և վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի լիազոր մարմինը կոմիտեն է:

4. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի սուբյեկտները ապահովում են տարածական տվյալների հավաքածուների թարմացումը և դրանց ինտեգրումը ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում: Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի իրագործման նպատակով սուբյեկտների պարտականությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծման, ֆունկցիոնալության և զարգացման համար ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

*Հոդված 21.* Օրենքի 5-րդ Գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՈԴԵԶԻԱՅԻ, ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ»:

*Հոդված 22.* Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

*«Հոդված 20. Միջազգային համագործակցությունը գեոդեզիայի, քարտեզագրության և տարածական տվյալների ենթակառուցվածքի բնագավառներում».*

2) առաջին մասում «Գեոդեզիայի և քարտեզագրության» բառերը փոխարինել «գեոդեզիայի, քարտեզագրության, տարածական տվյալների ենթակառուցվածքի» բառերով.

3) երկրորդ մասում «գեոդեզիական և քարտեզագրական» բառերը փոխարինել «գեոդեզիայի, քարտեզագրության, տարածական տվյալների ենթակառուցվածքի» բառերով:

*Հոդված 23. Անցումային դրույթներ*

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո` երկու տարվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է.

1) Ազգային տարածական տվյալների օգտագործման և վարման կարգը.

2) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի իրագործման նպատակով սուբյեկտների պարտականությունները.

3) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծման, ֆունկցիոնալության և զարգացման համար ֆինանսավորման կարգը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո` երկու տարվա ընթացքում, լիազոր մարմինը.

1) սահմանում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ շերտերի տարածական տվյալների ցանկը.

2) սահմանում է մետատվյալների ստեղծման և թարմացման կանոնները.

3) սահմանում է տարածական տվյալների հավաքածուների և ծառայությունների փոխգործելիության ապահովման տեխնիկական մեթոդները` հաշվի առնելով առկա տեխնոլոգիական հարթակների և էլեկտրոնային ծառայությունների կրկնակի օգտագործման առաջնահերթության կարգը  և կատարման ժամկետները.

4) հաստատում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի տարածական տվյալների փոխանակման, հասանելիության և օգտագործման կարգը:

*Հոդված 24. Եզրափակիչ մաս*

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

<u>ՏԵՂԵԿԱՆՔ</u>
<u>«ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ</u>

~~*Երկրորդ ընթերցում*~~

~~Կ-032-17.09.2021-ՏՀ-011/0~~

~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~

~~Օ Ր Ե Ն Ք Ը~~

~~«ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»~~

***Հոդված 1.*** «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» 2001 թվականի մայիսի 2-ի ՀՕ-179 օրենքի (այսուհետ՝ Օրենք) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԵՈԴԵԶԻԱՅԻ, ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ»:

***Հոդված 2.*** Օրենքի նախաբանից հանել «Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և քարտեզագրական գործունեության հետ կապված հարաբերությունները:» նախադասությունը:

***Հոդված 3.*** Օրենքի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«*Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան և նպատակը*

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական, քարտեզագրական և տարածական տվյալների ենթակառուցվածքի գործունեության հետ կապված հարաբերությունները: Հայաստանի Հանրապետությունում բոլոր քարտեզագրական և գեոդեզիական աշխատանքները, ներառյալ տարածական տվյալների հավաքագրումը, մշակումը, պահպանումը, տարածումը և տրամադրումը իրականացվում են սույն օրենքի համապատասխան:

2. Սույն օրենքի նպատակն է կարգավորել գեոդեզիական և քարտեզագրական գործունեության աշխատանքները, սահմանել Հայաստանի Հանրապետության կառավարության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, գեոդեզիայի, քարտեզագրության և տարածական տվյալների ենթակառուցվածքի բնագավառներում, հաստատել գեոդեզիական և քարտեզագրական գործունեության հետ կապված վեճերի լուծման և սույն օրենքը խախտելու համար պատասխանատվությունները, սահմանել գեոդեզիայի, քարտեզարության և տարածական տվյալների ենթակառուցվածքի բնագավառներում միջազգային համագործակցության կարգը:»:

***Հոդված 4.*** Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին հոդվածով.

«*Հոդված 1.1. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները*

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) գեոդեզիա՝ գիտական, տեխնիկական, արդյունաբերական և այլ գործունեությունների ընթացքում ծագող հարաբերությունների ոլորտ՝ երկրագնդի ծանրաչափական դաշտի, Երկրի մակերևույթի և տարածական օբյեկտների կոորդինատների ու բարձունքային նիշերի, ինչպես նաև ժամանակի ընթացքում նշված կոորդինատների և բարձունքային նիշերի փոփոխությունները որոշելու համար.1) գեոդեզիա՝ երկրագնդի ծանրաչափական դաշտի, Երկրի մակերեւույթի և տարածական օբյեկտների կոորդինատների ու բարձունքային նիշերի, ինչպես նաեւ ժամանակի ընթացքում նշված կոորդինատների և բարձունքային նիշերի փոփոխությունները որոշելու գիտական, տեխնիկական, արդյունաբերական և այլ գործունեությունների ընթացքում ծագող հարաբերությունների ոլորտ.

2) գեոդեզիական և քարտեզագրական գործունեություն՝ գեոդեզիայի, քարտեզագրության և տարածական տվյալների ենթակառուցվածքի ոլորտում գիտատեխնիկական, ծառայությունների մատուցման, տեղեկատվական համակարգերի օգտագործման և կառավարչական գործունեություն.

3) գեոդեզիական կետ՝ ինժեներական կառույց, որը տեղանքում ամրացված է երկրագնդի ֆիզիկական մակերևույթին որոշված կոորդինատներով և բացարձակ բարձրություններով.3) գեոդեզիական հիմնակետ՝ ինժեներական կառույց, որը տեղանքում ամրացված է երկրագնդի ֆիզիկական մակերևույթին որոշված կոորդինատներով և բացարձակ բարձրությունով.

4) գեոդեզիական ցանց՝ տեղանքում ամրացված գեոդեզիական հիմնակետերի ամբողջություն, որոնց տեղադիրքը որոշված է նրանց համար ընդհանուր հանդիսացող գեոդեզիական կոորդինատային համակարգում:

5) գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքներ՝ գեոդեզիական, քարտեզագրական նյութերի ու տարածական տվյալների ստեղծման, օգտագործման և ծառայությունների մատուցման գործընթաց.

6) Երկրի հեռազննում՝ տիեզերքից կատարված նկարահանումների միջոցով Երկրի մակերևույթի վերաբերյալ տվյալների ստացման գործընթաց.

7) կոորդինատային համակարգ՝ թվային մեծություններ, որոնց միջոցով հարթության, մակերևույթի վրա կամ տարածության մեջ որոշվում է կետի տեղադիրքը:

8) մասշտաբ՝ համամասնություն, որը սահմանում (հաստատում) է հարաբերակցությունը քարտեզագրական պատկերում արտահայտված օբյեկտի գծային չափերի և բնության մեջ նրա իրական չափերի միջև.

9) մասշտաբային շարք՝ Հայաստանի Հանրապետության համար ընդունված պետական մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների և հատակագծերի որոշակի մասշտաբների հստակ համակարգ.

10) տեղական կոորդինատային համակարգ՝ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորը չգերազանցող սահմանափակ տարածքի համար սահմանված պայմանական կոորդինատային համակարգ, որի կոորդինատների սկիզբը և կոորդինատային առանցքների կողմնորոշումը շեղված են պետական միասնական կոորդինատային համակարգի նկատմամբ, որը կիրառվում է գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացման ժամանակ.

11) տարածական տվյալներ՝ տարածական օբյեկտների վերաբերյալ տվյալներ, որոնք ներառում են տեղեկություններ դրանց ձևի, տեղադիրքի և հատկությունների մասին, և սահմանված տարածա-ժամանակային կոորդինատային համակարգում ունեն որոշակի տեղադիրք.

12) տարածական օբյեկտ՝ իրական աշխարհի առարկա կամ երևույթ, որը բնութագրվում է Երկրի վրա որոշակի տեղադիրքով.

13) բազային տարածական տվյալներ՝ համընդհանուր հասանելի, գաղտնիություն չպարունակող, ժամանակի մեջ կայուն տարածական դիրքով առանձնացվող և այլ տարածական օբյեկտների համար կողմնորոշման հիմք հանդիսացող, առավել օգտագործվող տարածական օբյեկտների թվային տվյալներ:

14) թեմատիկ տարածական տվյալներ՝ իրավահարաբերությունների սուբյեկտների կողմից իրենց մասնագիտական գործունեության շրջանակներում ստեղծված տարածական տվյալներ (տնտեսական, գիտական, կրթական և այլ).

15) տարածական տվյալների բանկ՝ բազային և (կամ) այլ տարածական և ատրիբուտային տվյալների համախումբ, որն անհրաժեշտ է տարածքների և օբյեկտների վիճակի, երևույթների և գործընթացների մոնիթորինգի, ինչպես նաև հանրապետական և տեղական մակարդակներում սոցիալական և տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման, կառավարման, տեղեկատվական, իրավական և այլ խնդիրների լուծման համար.

16) մետատվյալներ՝ տարածական տվյալներ և ծառայություններ նկարագրող տեղեկատվություն, որն ապահովում է դրանց ցուցակագրումը, որոնումը, տվյալների ճիշտ գնահատումն ու օգտագործումը տարբեր նպատակների համար.

17) քարտեզագրություն՝ տարածական տվյալների, այդ թվում՝ տեղեկատվական համակարգերի օգտագործման, ուսումնասիրության, ստեղծման, օգտագործման, վերափոխման և ցուցադրման համար գիտական, տեխնիկական, արդյունաբերական և այլ գործունեությունների ընթացում բխող հարաբերությունների ոլորտ.

18) քարտեզագրագեոդեզիական ֆոնդ՝ քարտեզագրական և գեոդեզիական գործունեության իրականացումից ստեղծված և հետագա օգտագործման նպատակներով երկարատև պահպանման ենթակա նյութերի ու տվյալների հավաքածու.

19) աշխարհագրական տեղեկատվական համակարգ՝ սարքածրագրային տեղեկատվական համակարգ, որը նախատեսված է տարածական տվյալների հավաքագրման, պահպանման, մշակման, վերլուծության, մոդելավորման, կառավարման և տարածման համար.

20) տարածական տվյալների ենթակառուցվածք՝ հանդիսանում է տեխնոլոգիաների, նպատակային ծրագրերի, չափորոշիչների (ստանդարտների), մարդկային ռեսուրսների և դրանց առնչվող գործունեությունների համախումբ, որոնք անհրաժեշտ են տարածական տվյալների, մետատվյալների ձեռք բերման, մշակման, տարածման, օգտագործման, պահպանման և ծառայությունների մատակարարման համար:

21) ազգային տարածական տվյալների ենթակառուցվածք՝ ազգային տարածական տվյալների ձեռքբերման, մշակման, պահպանման, տարածման, օգտագործման համար անհրաժեշտ տեխնոլոգիաների, քաղաքականության, նկարագրված և իրականացված նորմերի և կանոնների հավաքածուների, աշխարհագրական տեղեկատվական պլատֆորմի, ստանդարտների, մետատվյալների և դրանց մշակման ծառայությունների, չափանիշների, մարդկային ռեսուրսների և հարակից գործողությունների տվյալների հասանելիության, փոխանակման և օգտագործման համաձայնության, համակարգման և մոնիտորինգի մեխանիզմների ամբողջություն.

22) ազգային գեոպորտալ՝ համացանցային, սարքածրագրային համալիր՝ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի հիմնական տարր, որն ապահովում է տարածական տվյալների հասանելիությունը վեբ-տեխնոլոգիաների միջոցով:»:

*Հոդված 5.* Օրենքի 2-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում՝

ա. «գ» կետում «(պլանային և բարձունքային)» բառերը փոխարինել «(պլանային, բարձունքային և իրական ժամանակում մշտապես գործող)» բառերով.

բ. «գ» կետում «սահմանագծման» բառից հետո լրացնել «(դելիմիտացիա),» բառը, իսկ «սահմանազատման» բառից հետո լրացնել «(դեմարկացիա)» բառը.

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ժդ» կետով՝

«ժդ) իրական ժամանակում մշտապես գործող ռեֆերենց կայանների զարգացումը, շահագործումը և տվյալների մատակարարումը:».

2) 3-րդ մասում «ա» կետում «կադաստրի, հողերի ծրաչափություն» բառերը փոխարինել «կադաստրային» բառով.

3) 4-րդ մասում՝

ա. «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) տեղագրական և կադաստրային քարտեզների, հատակագծերի պետական մասշտաբային շարքի սահմանումը.».

բ. «բ» կետում «տեղագրական,» բառից հետո լրացնել «կադաստրային,» բառը.

գ. «գ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) Երկրի հեռազննման արդյունքում ստացված նյութերի մշակումը, վերծանումը, օդատիեզերական լուսանկարների ֆոտոգրամետրիկ մշակումը քարտեզների ստացման նպատակով.».

դ. «է» կետում «(այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային ատլասի, Աշխարհի մեծ ատլասի, կրթական համակարգի համար ուսումնական և այլ պաշտոնական քարտեզների)» բառերը փոխարինել «(այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային ատլասի, Աշխարհի մեծ ատլասի, կրթական համակարգի համար ուսումնական և պաշտոնական, թեմատիկ քարտեզների ու ատլասների, տուրիստական ~~բուկլետների~~ ատլասների)» բառերով.

ե. «թ» կետում «երկրատեղեկատվական» բառը փոխարինել «աշխարհագրական տեղեկատվական» բառերով.

զ. «ժ» կետում «քարտեզների ու հատակագծերի» բառերը փոխարինել «քարտեզների, հատակագծերի, տարածական տվյալների» բառերով.

է. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ժդ», «ժե», «ժզ», «ժէ», «ժը» կետերով՝

«ժդ) ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծում, վարում և փոխգործելիության ապահովում.

ժե) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին և հասարակությանն անհրաժեշտ տարածական տեղեկատվության ստեղծում, դրա հասանելիության, մատչելիության, անընդհատության ապահովում.

ժզ) տարածական տվյալների և ծառայությունների հասանելիության ապահովում ազգային գեոպորտալի միջոցով.

ժէ) քարտեզագրության ոլորտում տարածական տվյալների փոխանակման և կառավարման նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի նախապատրաստում.

ժը) տարածական տվյալների, ծառայությունների օգտագործման և փոխանակման քաղաքականության մշակում:».

4) 5-րդ մասում՝

ա. «ա» կետում «ճյուղային» բառից հետո լրացնել «(ոլորտային)» բառը.

բ. «բ» կետում «երկրատեղեկատվական» բառը փոխարինել «աշխարհագրական տեղեկատվական» բառերով, իսկ «համակարգերի» բառից հետո լրացնել «(տարածական տվյալների ենթակառուցվածք)» բառերը:

*Հոդված 6.* Օրենքի 3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. «նյութերի և» բառերից հետո լրացնել «տարածական» բառը.

բ. լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության սուբյեկտները ենթակա են հաշվառման կոմիտեի կողմից սահմանված կարգով:»:

*Հոդված 7.* Օրենքի 2-րդ Գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՈԴԵԶԻԱՅԻ, ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ».

Հոդված 8. Օրենքի 4-րդ հոդվածում՝

1) վերնագրում և «ա» կետում «գեոդեզիայի և քարտեզագրության» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «գեոդեզիայի, քարտեզագրության, տարածական տվյալների ենթակառուցվածքի» բառերով.

2) «բ» կետում «գեոդեզիական և քարտեզագրական» բառերը փոխարինել «գեոդեզիական, քարտեզագրական, տարածական տվյալների ենթակառուցվածքին վերաբերող» բառերով.

3) «դ» և «զ» կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) հաստատում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ տարածական տվյալների ցանկը և դրանց ստանդարտացման ուղեցույցները.

զ) սահմանում է տարածական տվյալների ենթակառուցվածքի վարման և վերջինիս միջոցով տեղեկատվության տրամադրման կարգը.».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «է» կետով.

«է) սահմանում է պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի ստեղծման, պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգը:»:

*Հոդված 9.* Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«***Հոդված 5.*** *Գեոդեզիայի, քարտեզագրության և տարածական տվյալների ենթակառուցվածքի բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի իրավասությունը*».

2) «Գեոդեզիայի և քարտեզագրության» բառերից առաջ լրացնել «1.» թիվը.

3) «ա» կետում «գեոդեզիայի և քարտեզագրության» բառերը համապատասխան հոլովածևերով փոխարինել «գեոդեզիայի, քարտեզագրության և տարածական տվյալների ենթակառուցվածքի» բառերով.

~~3~~4) «բ» կետում «բնագավառի» բառից հետո լրացնել «և տարածական տվալների ենթակառուցվածքի վերաբերյալ» բառերը.

~~4~~5) «գ» կետում «աշխատանքների» բառից հետո լրացնել «, ինչպես նաև և ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքին վերաբերող» բառերը.

~~5~~6) «ե» կետում «քարտեզագրական» բառից հետո լրացնել «, տարածական» բառը.

~~6) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ի» կետով.~~

~~«ի) ուսումնասիրում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարվող գեոդեզիական և քարտեզագրական տարրեր պարունակող պետական և տեղական նշանակության աշխատանքները: Նախագծային փաստաթղթերը հաստատվում են միայն կոմիտեի համաձայնությամբ:»:~~7) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ մասով.

«2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները իրենց վերապահված գործառույթների իրականացման գործընթացում նախատեսվող թվային երկրատարածական տվյալների ստեղծման աշխատանքներ պլանավորելիս համապատասխան նախագծերը, ինչպես նաև տվյալ աշխատանքների արդյունքում ստեղծված երկրատարածական տվյալները՝ մինչև դրանք ընդունելը, ներկայացնում են լիազոր մարմին՝ կարծիքի:»:

*Հոդված 10.* Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) «ա», «բ», «գ» կետերում «ճյուղային» բառից հետո լրացնել «(ոլորտային)» բառը.

2) «ե» կետում «քարտեզագրական» բառից հետո լրացնել «, տարածական» բառը.

3) «զ» կետում «նյութեր» բառից հետո լրացնել «ու տարածական տվյալներ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ստանդարտներով:» բառերը:

*Հոդված 11.* Օրենքի 7-րդ հոդվածում «ե» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ստանդարտների համաձայն կոմիտեին տրամադրում է գեոդեզիական և քարտեզագրական բնույթի նյութեր ու տարածական տվյալներ:»:

*Հոդված 12.* Օրենքի 3-րդ Գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 3.

ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ, ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ»:

*Հոդված 13.* Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) վերնագրում «քարտեզագրական» բառից հետո լրացնել «, տարածական տվյալների ենթակառուցվածքի» բառերը.

2) 3-րդ ~~մասում~~մասի «ա» կետում «քարտեզագրական» բառից հետո լրացնել «, տարածական տվյալների ենթակառուցվածքի» բառերը.

3) 3-րդ մասի «բ» կետում «աշխատանքների» բառից հետո լրացնել «, տարածական տվյալների ենթակառուցվածքի» բառերը:

~~*Հոդված 14.* Օրենքի 9-րդ հոդվածում՝~~

~~1) 1-ին մասում «այդ գործիքների ու սարքերի սերտիֆիկացումը,» բառերը հանել.~~

~~2) 2-րդ մասում «և սերտիֆիկացման» բառերը հանել:~~

*Հոդված 14.* Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. «այդ գործիքների ու սարքերի սերտիֆիկացումը,» բառերը հանել.

բ. «սերտիֆիկացման և ստանդարտացման պետական կոմիտեի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման բնագավառում կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի» բառերով.

2) 2-րդ մասում «և սերտիֆիկացման» բառերը հանել:

*Հոդված 15.* Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ ~~մասում~~մասի առաջին պարբերությունում «նյութերն ու» բառերից հետո լրացնել «տարածական» բառը, իսկ նույն ~~հոդվածի~~մասի երկրորդ պարբերությ~~ա~~ուննում «նյութերի» բառից հետո լրացնել «և տարածական տվյալների» բառերը:

*Հոդված 16.* Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «նյութերը ու» բառերը փոխարինել «նյութերն ու տարածական» բառերով, իսկ «այլ նյութերը ու» բառերը փոխարինել «այլ նյութերն ու տարածական» բառերով.

2) 2-րդ մասում «նյութերը ու» բառերը փոխարինել «նյութերն ու տարածական» բառերով.

3) 3-րդ մասում «նյութերից և» բառերից հետո լրացնել «տարածական» բառը.

4) 6-րդ և 7-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

*Հոդված 17.* Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «գեոդեզիայի և քարտեզագրության» բառերը փոխարինել «գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների» բառերով.

2) 3-րդ մասի «դ)» կետից հանել «պետական կազմակերպություններին,» բառերը:

*Հոդված 18.* Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «նյութերից ու» բառերից հետո լրացնել «տարածական» բառը:

*Հոդված 19.* Օրենքի 16-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

*«Հոդված 16. Պետական գեոդեզիական և մշտապես գործող ռեֆերենց կայանների ցանցերի կետերի պահպանությունը».*

2) 1-ին մասում «(պլանային և բարձունքային)» բառերը փոխարինել «(պլանային, բարձունքային և իրական ժամանակում մշտապես գործող)» բառերով.

3) 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերում «Գեոդեզիական» բառից հետո լրացնել «և իրական ժամանակում մշտապես գործող» բառերը:

*Հոդված 20*. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.1-ին, 16.2-16.5-րդ հոդվածներով.

*«Հոդված 16.1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի վարման սկզբունքները*

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծման և զարգացման գործընթացների փոխկապակցվածությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, շրջակա միջավայրի պաշտպանության, անվտանգության, պետական կառավարման առաջնահերթ խնդիրների լուծման, երկրի պաշտպանունակության և ազգային անվտանգության ապահովման հետ:

2. Տարածական տվյալների արդիականություն, լրիվություն, լիարժեք նկարագրություն, հուսալիություն, ամբողջականություն և հաստատված ճշգրտություն:

3. Տարածական տվյալների համատեղելիություն, որը հիմնված է միասնական բազային տարածական տվյալների բանկի օգտագործման, միասնական կոորդինատային համակարգի, միասնական տեխնիկական նորմերի և ստանդարտների հիման վրա:

4. Տեխնիկական կանոնակարգերի, ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային ստանդարտների ներդաշնակեցում և համապատասխանեցում միջազգային ստանդարտներին:

5. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի, որպես բարդ կազմակերպչական և տեխնիկական համակարգի ստեղծման և զարգացման փուլայնությունը, որոնք բնութագրվում են կայունությամբ, զարգացման և շարունակական բարելավման անսահմանափակ տևողությամբ` ինտեգրված և համալիր մոտեցումների հիման վրա:

~~6. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի վարումը ազգային գեոպորտալի միջոցով:~~

~~7~~6. Ազգային տարածական տվյալների քաղաքականությունը իրականացվում է պարզության, թափանցիկության և արդարության միևնույն ժամանակ անվտանգության սկզբունքների հիման վրա:

*Հոդված 16.2. Տարածական տվյալների ~~բաշխում~~տրամադրումը*

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում առանձնացվում են բազային և թեմատիկ տարածական տվյալների շերտեր: Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ շերտերի տարածական տվյալների ցանկը սահմանվում է լիազոր մարմնի կողմից:

2. Բազային տարածական տվյալների շերտերը համարվում են պետական սեփականություն՝ անկախ ֆինանսավորման աղբյուրներից և դրանց ստեղծումից (թարմացումից), և մասնավորեցման ենթակա չեն: Բազային տարածական տվյալների այն մասը, որը ենթակա է հրապարակման չպետք է պարունակի պետական գաղտնիք պարունակող տեղեկատվություն, ինչպես նաև այլ տեղեկություններ, որոնց հասանելիությունը օրենքով սահմանված կարգով սահմանափակված է:

3. Թեմատիկ տարածական տվյալների կառուցվածքը, դրանց թարմացման և տրամադրման կարգը սահմանվում են ոլորտային լիազոր մարմինների կողմից ընդունված իրավական ակտերով:

4. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում տարածական տվյալները ստեղծվում, պահպանվում և ~~բաշխ~~տրամադրվում են մեկ միասնական կոորդինատային համակարգում:

*Հոդված 16.3. Մետատվյալների ստեղծումը և բովանդակությունը*

1. Մետատվյալները հրապարակվում են մետատվյալների շտեմարանում (կատալոգում), որոնց միջոցով շահառուները կարող են փնտրել և օգտվել տվյալների բազաներից կամ ծառայություններից:

2. Տարածական տվյալներ տրամադրող պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ստեղծում են իրենց մետատվյալները և ապահովում դրանց արդիականությունը:

3. Մետատվյալների ստեղծման և թարմացման կանոնները սահմանում է լիազոր մարմինը:

*Հոդված 16.4. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի փոխգործելիությունը, ոլորտային կադաստրների ինտեգրումը և տարածական տվյալների օգտագործման և փոխանակման քաղաքականությունը*

1. Կիրառման կանոնները, որոնք սահմանում են տարածական տվյալների հավաքածուների և ծառայությունների փոխգործելիության ապահովման տեխնիկական մեթոդները՝ հաշվի առնելով առկա տեխնոլոգիական հարթակների և

էլեկտրոնային ծառայությունների կրկնակի օգտագործման առաջնահերթության կարգը, ինչպես նաև կատարման ժամկետները սահմանում է լիազոր մարմինը:

2. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի լիազոր մարմինը ոլորտային կադաստրների ինտեգրման նպատակով ազգային գեոպորտալի միջոցով ապահովում է բազային քարտեզագրական շերտերի հասանելիությունը:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ապահովում են իրենց ենթակայության տակ գտնվող տարածական տվյալների հասանելիություն ազգային գեոպորտալի միջոցով ~~համաձայնեցված ձևաչափով և որակով~~Կառավարության սահմանած կարգով:

4. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի տարածական տվյալների փոխանակման, հասանելիության և օգտագործման կարգը հաստատում է լիազոր մարմինը:

*Հոդված 16.5. ~~Սուբյեկտների և երրորդ անձանց պարտականությունները: Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի կառավարումը և կազմակերպումը~~Հայաստանի Հանրապետության կառավարության, Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի լիազոր մարմնի և սուբյեկտների իրավասություններն ու պարտականությունները*

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունն ապահովում է.

1) ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ոլորտին վերաբերող պետական քաղաքականության բարելավում,

2) տարածական տվյալների ազգային ենթակառուցվածքին վերաբերող նորմերի պահպանման նկատմամբ պետական վերահսկողության և հսկողության կազմակերպում,

3) տարածական տվյալների ազգային ենթակառուցվածքի գեոպորտալի ստեղծում և շահագործում,

4) տարածական տվյալների ազգային ենթակառուցվածքի ոլորտում սուբյեկտների իրավասությունների որոշում և հաստատում:

2. Ազգային տարածական տվյալների օգտագործման և վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի լիազոր մարմինը կոմիտեն է:

4. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի սուբյեկտները ապահովում են տարածական տվյալների հավաքածուների թարմացումը և դրանց ինտեգրումը ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում: Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի իրագործման նպատակով սուբյեկտների պարտականությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծման, ֆունկցիոնալության և զարգացման համար ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

*Հոդված 21.* Օրենքի 5-րդ Գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՈԴԵԶԻԱՅԻ, ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ»:

*Հոդված 22.* Օրենքի 20-րդ հոդվածում`

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

*«Հոդված 20. Միջազգային համագործակցությունը գեոդեզիայի, քարտեզագրության և տարածական տվյալների ենթակառուցվածքի բնագավառներում».*

2) առաջին ~~պարբերությունում~~մասում «Գեոդեզիայի և քարտեզագրության» բառերը փոխարինել «գեոդեզիայի, քարտեզագրության, տարածական տվյալների ենթակառուցվածքի» բառերով.

3) երկրորդ ~~պարբերությունում~~մասում «գեոդեզիական և քարտեզագրական» բառերը փոխարինել «գեոդեզիայի, քարտեզագրության, տարածական տվյալների ենթակառուցվածքի» բառերով:

*Հոդված 23. Անցումային դրույթներ*

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո` երկու տարվա ~~ժամկետում~~ընթացքում, Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է.

1) Ազգային տարածական տվյալների օգտագործման և վարման կարգը.

2) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի իրագործման նպատակով սուբյեկտների պարտականությունները.

3) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծման, ֆունկցիոնալության և զարգացման համար ֆինանսավորման կարգը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո` երկու տարվա ~~ժամկետում~~ընթացքում, լիազոր մարմինը.

1) սահմանում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ շերտերի տարածական տվյալների ցանկը.

2) սահմանում է մետատվյալների ստեղծման և թարմացման կանոնները.

3) սահմանում է տարածական տվյալների հավաքածուների և ծառայությունների փոխգործելիության ապահովման տեխնիկական մեթոդները՝ հաշվի առնելով առկա տեխնոլոգիական հարթակների և էլեկտրոնային ծառայությունների կրկնակի օգտագործման առաջնահերթության կարգը և կատարման ժամկետները.

4) հաստատում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի տարածական տվյալների փոխանակման, հասանելիության և օգտագործման կարգը:

*Հոդված 24.* ~~*Օրենքի ուժի մեջ մտնելը*~~*Եզրափակիչ մաս*

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-032-17.09.2021, 22.10.2021-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունների ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 4-րդ հոդված** | Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 1.1-ին հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br>«1) գեոդեզիա՝ երկրագնդի ծանրաչափական դաշտի, Երկրի մակերևույթի և տարածական օբյեկտների կոորդինատների ու բարձունքային նիշերի, ինչպես նաև ժամանակի ընթացքում նշված կոորդինատների և բարձունքային նիշերի փոփոխությունները որոշելու գիտական, տեխնիկական, արդյունաբերական և այլ գործունեությունների | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ընթացքում ծագող հարաբերությունների ոլորտ:»: | | |
| 2. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 4-րդ հոդված** | Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 1.1-ին հոդվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br>«3) գեոդեզիական հիմնակետ՝ ինժեներական կառույց, որը տեղանքում ամրացված է երկրագնդի ֆիզիկական մակերևույթին որոշված կոորդինատներով և բացարձակ բարձրությունով.»: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 3. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 4-րդ հոդված** | Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 1.1-ին հոդվածի չհամարակալված պարբերությունն անհրաժեշտ է համարակալել: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 4. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ կետ** | Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ կետում հստակ նշել, թե Օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի որ կետում է կատարվում վերոնշյալ լրացումը:<br>Սույն դիտողությունը վերաբերում է նաև Նախագծի 13-րդ հոդվածի 3-րդ կետին: | Ընդունվել է:<br>Նախագծի 5-րդ հոդվածի Օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասում «ճյուղային» բառից հետո հստակ նշվել է «ա» կետը: | |
| 5. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 5-րդ հոդված** | Նախագծի 5-րդ հոդվածով փոփոխվող Օրենքի 2-րդ հոդվածի | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 4-րդ մասի «է» կետում «տուրիստական բուկլետների» բառերը փոխարինել «տուրիստական ատլասների» բառերով: | | |
| 6. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 9-րդ հոդված** | 1. Նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 5-րդ հոդվածում լրացնել նոր 2-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ, ըստ այդմ փոխելով հոդվածի համարակալումը.<br>«2) «Գեոդեզիայի և քարտեզագրության» բառերից առաջ լրացնել «1.» թիվը».<br>2. Նախագծի 9-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ի)» ենթակետը հանել.<br>3. Նախագծի 9-րդ հոդվածը լրացնել նոր 7-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝<br><br>«7) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ մասով. «2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները իրենց վերապահված գործառույթների իրականացման գործընթացում նախատեսվող թվային երկրատարածական տվյալների | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ստեղծման աշխատանքներ պլանավորելիս համապատասխան նախագծերը, ինչպես նաև տվյալ աշխատանքների արդյունքում ստեղծված երկրատարածական տվյալները` մինչև դրանք ընդունելը, ներկայացնում են լիազոր մարմին` կարծիքի:»: | | |
| 7. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 11-րդ հոդված** | Նախագծի 11-րդ հոդվածով խմբագրվող Օրենքի 7-րդ հոդվածի «ե» կետում «կոմիտե» բառն անհրաժեշտ է փոխարինել «կոմիտեին» բառով: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 8. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 13-րդ հոդված** | Ինչպես նաև անհրաժեշտ է Նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ կետում «3-րդ մասում» բառերը փոխարինել «3-րդ մասի» բառերով: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 9. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 14-րդ հոդված** | Նախագծի 14-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.<br>«Հոդված 14. Օրենքի 9-րդ հոդվածում`<br>1) 1-ին մասում`<br>ա. «այդ գործիքների ու սարքերի սերտիֆիկացումը,» բառերը հանել.<br>բ. «սերտիֆիկացման և ստանդարտացման պետական | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կոմիտեի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման բնագավառում կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի» բառերով.<br>2) 2-րդ մասում «և սերտիֆիկացման» բառերը հանել: | | |
| 10. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 15-րդ հոդված** | Նախագծի 15-րդ հոդվածն առաջարկում ենք խմբագրել հետևյալ կերպ.<br>«**Հոդված 15.** Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունում «նյութերն ու» բառերից հետո լրացնել «տարածական» բառը, իսկ նույն մասի **երկրորդ** պարբերությունում «նյութերի» բառից հետո լրացնել «և տարածական տվյալների» բառերը:»: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 11. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 20-րդ հոդված** | Նախագծի 20-րդ հոդվածով լրացվող 16.2-րդ հոդվածի վերնագրում «բաշխումը» բառը փոխարինել «տրամադրումը» բառով: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 12. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 20-րդ հոդված** | Նախագծի 20-րդ հոդվածով լրացվող 16.2-րդ հոդվածի 4-րդ մասում | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | «բաշխվում են» բառերը փոխարինել «տրամադրվում են» բառերով: | | |
| 13. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 20-րդ հոդված** | Նախագծի 20-րդ հոդվածով լրացվող Օրենքի 16.1-ին հոդվածի վերնագիրն է՝ *«Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի վարման **սկզբունքները**»:* Վերոնշյալ հոդվածի 6-րդ մասում սահմանված է հետևյալ կարգավորումը՝ *ազգային տարածական տվյալների ենթկառուցվածքի վարումը ազգային գեոպորտալի միջոցով:* Այս առումով, գտնում ենք, որ վերոնշյալ հոդվածից անհրաժեշտ է հանել 6-րդ մասը, քանի որ այն իրենից ենթադրում է իրավական կարգավորում, այլ ոչ թե սկզբունք: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 14. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 20-րդ հոդված** | Նախագծի 20-րդ հոդվածով լրացվող Օրենքի 16.4-րդ հոդվածի 3-րդ մասում «հասանեիություն» բառն անհրաժեշտ է փոխարինել «հասանելիություն» բառով: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 15. | ՀՀ | **Նախագծի 20-րդ** | Օրենքի 16.4-րդ հոդվածի 3-րդ | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կառավարություն | **հոդված** | մասում անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ կարգով են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ապահովում տարածական տվյալների հասանելիությունը, ինչպես նաև պարզաբանել՝ թե ինչ համաձայնեցված ծավալի և որակի մասին է խոսքը և ում միջև է այն համաձայնեցվում: | Նախագծի 20-րդ հոդվածի Օրենքի 16.4-րդ հոդվածի 3-րդ մասում նշվել է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ապահովում են իրենց ենթակայության տակ գտնվող տարածական տվյալների հասանելիություն ազգային գեոպորտալի միջոցով Կառավարության սահմանած կարգով: Համաձայնեցված ծավալը և որակը կսահմանվեն կառավարության սահմանած կարգով: | |
| 16. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 20-րդ հոդված** | Նախագծի 20-րդ հոդվածով լրացվող Օրենքի 16.5-րդ հոդվածի վերնագիրն է՝ ***«սուբյեկտների և երրորդ անձանց պարտականությունները»***, մինչդեռ՝ նույն հոդվածի 4-րդ մասում խոսք | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | է գնում միայն **սուբյեկտների** պարտականությունների մասին: Այս առումով, առաջարկում ենք վերոնշյալ կարգավորումները համապատասխանեցնել միմյանց՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթները, այն է՝ *(…) հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը:* | | |
| 17. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետեր** | Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում «առաջին պարբերությունում», «երկրորդ պարբերությունում» բառերն անհրաժեշտ է փոխարինել համապատասխանաբար «առաջին մասում», «երկրորդ մասում» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 18. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 23-րդ հոդված** | Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «երկու տարվա | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ժամկետում» բառերն անհրաժեշտ է փոխարինել «երկու տարվա ընթացքում» բառերով: | | |
| 19. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 24-րդ հոդված** | Նախագծի 24-րդ հոդվածի վերնագիրն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես` «Օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը» բառերը փոխարինել` «Եզրափակիչ մաս» բառերով` հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի դրույթները: | Ընդունվել է: | Ընդունվել է: |